Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ –ում գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզում 2013թ. ընթացքում իրականացված աշխատանքների

№	Միջոցառման անվանումը	Կատարած աշխատանքները	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում կանանց դերակատարման բարձրացում և ամրագրում	Համայնքների ղեկավարների աշխատակազմերում ավելացել է կանանց թիվը, մասնավորապես՝ աշխատակազմերի քարտուղարների թվում ավելացել և մատչելի է դարձել դերակատարությունը:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպում	Առաջին կիսամյակի ընթացքում քարոզչություն և իրազեկում է իրականացվել Վայքի տարածաշջանի համայնքներում, կրթական հաստատություններում և առողջապահական հիմնարկներում, մասնակցել են նաև կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մարզխորհրդում քննարկման ներկայացնել առկա գենդերային խնդիրները և դրանց հաղթահարման մեթոդներն ու ձևերը	Մարզխորհրդի հունիսի 14-ի նիստում քննարկվել է << Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին>> ՀՀ օրենքի առանձին հոդվածների պահանջներ և կետեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	Մարզային թերթերում գենդերային հիմնահարցերի լուսաբանման կազմակերպում	Մարզային թերթում մշտապես տեղադրվում են գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի նիստերում կատարված քննարկումները և ընդունված որոշումները:	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Գենդերային քաղաքականության հիմնական ուղղությունների լուսաբանում ծնողների շրջանում	Մարզպետի կողմից հանձնարարվել է հանրակրթական դպրոցների տնօրեններին ծնողական ժողովների և հանդիպումների ժամանակ լուսաբանել ՀՀ-ում գենդերային քաղաքականության հիմնական խնդիրների մասին:	Ֆինանսավորում չի պահանջվել

Ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետ՝ Վ.Իսախանյան
14/01/2014